



Հայաստանը, որպես հնագույն քաղաքակրթության բաղկացուցիչ մաս, հայտնի է վաղագույն ժամանակներից:

Մ.թ.ա. IV-II դարերում հայաբնակ շրջանները բաժանված էին երեք խոշոր վարչական միավորի՝ Փոքր Հայք, Ծովք և Մեծ Հայք, որոնք արդեն մ.թ.ա. II դարում դարձան անկախ պետություններ: Դրանց մեջ ամենից գորեղը Մեծ Հայքի պետությունն էր, որտեղ մ.թ.ա. II դարից մինչև մ.թ. V դարը նախ թագավորում էին Արտաշեսյանները, ապա Արշակունիները:


Մեծ Հայքը բաղկացած էր 15 «աշխարհներից», որոնք բոլորը միասին ունեին 191 գավառ: Այդ «աշխարհներն» էին. Տայք, Բարձր Հայք, Չորրորդ Հայք, Աղձնիք, Կորճեք, Մոկք, Պարսկահայք, Փայտակարան, Արցախ, Ուտիք, Սյունիք, Գուգարք, Տուրուբերան, Վասպուրական և Այրարատ, որը ամենահայտնի «աշխարհն» էր, որպես քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի կենտրոն:

Նոր և նորագույն ժամանակներում պատմական Հայաստանի տարածքը բաժանված էր արևմտյան և արևելյան հատվածների, որոնք ընդգրկված էին Օսմանյան Թուրքիայի և Իրանի (1828 թվականից Ռուսաստանի) կազմում:

Խորհրդային տարիներին Հայաստանի տարածքը բաժանված էր 37 շրջանների:

Հայաստանի Հանրապետության ներկա վարչատարածքային բաժանումը՝ 10 մարզ և Երևան քաղաքը մարզի կարգավիճակով, ձևավորվել է 1995 թվականին՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ



## Տ Ա Ր Ա Ծ Ք Ը

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Ասիայի հարավ-արևմուտքում: Գրավում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածը՝ Կովկասի և Առաջավոր Ասիայի միջև (Կուր և Արաքս գետերի միջին հոսանքների միջգետային տարածքը): Ընդհանուր տարածքն ընկած է հյուսիսային լայնության  $38^{\circ} 50^1 - 41^{\circ} 18^1$  -ի և արևելյան երկայնության  $43^{\circ} 27^1 - 46^{\circ} 37^1$  -ի միջև:

Հյուսիսից և արևելքից սահմանակից է Վրաստանին և Ադրբեջանին, իսկ արևմուտքից և հարավից՝ Թուրքիային և Իրանին:

Երկրի տարածքը կազմում է 29743 կմ<sup>2</sup>, որի 71.6%-ը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը, 10.2%-ը՝ անտառները, 7.4%-ը՝ հատուկ պահպանվող տարածքները: ՀՀ տարածքի 36.4%-ը լեռներն են, բարձրավանդակներն ու այլ հողերը:

Երկրի ամենաբարձր կետը Արագած լեռնագագաթն է (4090 մ), ամենախոր իջվածքը՝ Գեբեղ գետի կիրճը (390 մ): Ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք 360 կմ է, իսկ արևմուտքից արևելք՝ 200 կմ:

## Լ Ե Ռ Ն Ա Գ Ա Գ Ա Թ Ն Ե Ր Ը

Անվանումը	Տեղանքը	Բարձրությունը ծովի մակերևույթից, մետր
Արագած	Արագածի լեռնագանգված	4090
Կապուտջուղ	Զանգեզուրի լեռնաշղթա	3906
Աժդահակ	Գեղամա լեռնաշղթա	3598
Սպիտակասար	Գեղամա լեռնաշղթա	3555
Իշխանասար	Ղարաբաղի բարձրավանդակ	3552
Վարդենիս	Վարդենիսի լեռնաշղթա	3522
Արամասար	Բարգուշատի լեռնաշղթա	3392
Բաղացսար	Մեղրու լեռնաշղթա	3250
Խուստուփ	Խուստուփ-Կատարի լեռնաշղթա	3214
Լեզի	Ջավախքի լեռնաշղթա	3157
Գոգի	Վայքի լեռնաշղթա	3113
Թեժ լեռ	Փամբակի լեռնաշղթա	3101
Մեծ Եղնախաղ	Եղնախաղի լեռնաշղթա	3042
Բովաքար	Հայքի լեռնաշղթա	3016
Միափոր	Միափորի լեռնաշղթա	2993
Ուրասար	Բագումի լեռնաշղթա	2993
Քաշաթաղ	Սևանի լեռնաշղթա	2901
Արալի լեռ	Արալի լեռնագանգված	2577

Հայաստանը լեռնային երկիր է: Տարածքի 76.5%-ը գտնվում է ծովի մակերևույթից 1000-2500 մ բարձրության վրա: Լեռնաշղթաները գրավում են մոտ 14 հազ.կմ<sup>2</sup> տարածք կամ երկրի ընդհանուր մակերեսի 47%-ը: Բարձրավանդակները կազմում են երկրի մակերեսի ավելի քան 1/3-ը (11 հազ.կմ<sup>2</sup>): Հայաստանի տարածքը յուրահատուկ երկրաբանական թանգարան է: Այստեղ կարելի է գտնել երկրակեղևում առկա համարյա բոլոր ապարները: Հայաստանի ընդերքը հարուստ է բազմազան օգտակար հանածոներով: Հրաբխային ժայթքումների հետևանքով գոյացել է բնական շինանյութերի՝ տուֆի, բազալտի, անդեզիտի, պեռլիտի և շինարարությունում օգտագործվող հանքանյութերի մեծ պաշար:

**ԽՈՇՈՐ ԳԵՏԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԻԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ<sup>1</sup>**

Գետերի անվանումը	Երկարությունը, կմ	Միջին թեքությունը, ‰	Ջրի ավազանի մակերեսը, կմ <sup>2</sup>	Միջին տարեկան ելքը, մ <sup>3</sup> /վրկ	Միջին տարեկան հոսքը, մլրդ.մ <sup>3</sup>
Ախուրյան	186	5.7	2784	7.35	0.23
Ղեբեղ	154	11.0	3790	33.6	1.06
Հրազդան	141	7.6	2560	26.0	0.82
Որոտան	111	21.0	2030	19.0	0.6
Արփա	92	24.0	2080	14.0	0.44
Քասախ	89	29.0	1480	3.38	0.11
Փամբակ	84	13.0	1370	10.6	0.33
Աղստև	81	31.0	1730	10.2	0.32
Չորագետ	67	22.0	1460	15.6	0.49
Գետիկ	58	29.0	586	3.53	0.11
Վեդի	58	33.0	633	1.84	0.06
Արգիճի	51	12.0	384	5.49	0.17
Գավառագետ	50	25.0	480	3.44	0.11
Մասրիկ	45	22.0	685	3.24	0.1
Ողջի	43	68.0	788	11.0	0.35
Ազատ	40	31.0	572	4.88	0.15
Սեղրի	36	63.0	336	2.89	0.09

**Լ Ճ Ե Ր Ը**

	Մակարդակի միջ. մ	Ծավալը	Հայելու մակերեսը, կմ <sup>2</sup>
Սևանա	1898.25	35.4 կմ <sup>3</sup>	1256.9
Սև	2708	9 մլն. մ <sup>3</sup>	2.0
Ակնա	3038	3.91 մլն. մ <sup>3</sup>	0.53
Քարի	3190	357 հազ. մ <sup>3</sup>	0.3
Այրբ	853	310 հազ. մ <sup>3</sup>	0.03
Կապուտան	3299	40.9 հազ. մ <sup>3</sup>	0.1

**ՄԵՎԱՆԱ ԼՃԻՑ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ ԵՎ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԱՄԻՄՆԵՐԻ**

Տարի-ներ	Ջրի բացթողումները, մլն.մ <sup>3</sup> տարի	Լճի մակարդակը /մ/ և ամսական տատանումները /սմ/														Ջրի մակարդակի միջը տարեկանը	Ջրի մակարդակի տատանումները տարվա ընթացքում, սմ <sup>2</sup>
		մակարդակի ամսական տատանումները նախորդ ամսվա համեմատ, սմ												Ջրի մակարդակի միջը տարեկանը			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր				
2001	158.2	1896.46	+1	+1	+7	+13	+10	-2	-6	-12	-9	-8	-4	-5	1896.32	-14	
2002	99.4	1896.32	+1	+10	+6	+15	+23	+18	+7	-6	-7	-6	-5	-5	1896.76	+44	
2003	106.6	1896.76	+1	+5	+7	+22	+23	+14	-5	-3	-9	-1	-2	-4	1897.24	+48	
2004	149.9	1897.24	+1.5	+3.5	+9	+17	+24	+16	+2	-10	-9	-6	+1	-6	1897.65	+41	
2005	149.6	1897.66	+3	+2	+10	+16	+22	+12	-5	-5	-6	-3	-2	-3	1898.07	+41	
2006	152.4	1898.07	+3	+2	+6	+23	+20	-2	-3	-11	-11	0	-6	-4	1898.25	+18	

<sup>1</sup> Տրամադրվել է Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության (ՊՈԱԿ) կողմից: Այն գետերի համար, որոնք դուրս են գալիս հանրապետության սահմաններից, տվյալները բերված են հանրապետության սահմանների մասով:

<sup>2</sup> Ըստ ամիսների հանրագումարի հետ անհամապատասխանությունը պայմանավորված է ցուցանիշների կլորացմամբ:

Հայաստանի տարածքում ամենամեծ լիճը Սևանա լիճն է (մակերեսը 1256.9 կմ<sup>2</sup>), ամենաերկար գետն Արաքսը՝ 158<sup>1</sup> կմ (ընդհանուր երկարությունը՝ 1072 կմ):

Հանրապետության ջրային պաշարները սահմանափակ են և տարեկան կազմում են ընդամենը 8.5 մլրդ.մ<sup>3</sup>, որից 6.54 մլրդ.մ<sup>3</sup>-ը մակերեսային հոսքն է: Հայաստանի գետերը հիմնականում լեռնային են, խիստ արտահայտված մեծենային (սակավաջուր) հոսքերով:

ՀՀ տարածքում գտնվում են քաղցրահամ լճեր և ջրամբարներ՝ մոտ 35.8 մլրդ. մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով, որի մոտ 96%-ը կազմում է աշխարհի ամենաբարձրադիր լեռնային լճերից մեկը՝ Սևանը, որը գտնվում էր ծովի մակերևույթից 1916 մ (մինչև իջեցումը) բարձրության վրա: Լճի ջրային պաշարները 2006թ. կազմել են մոտ 35.4 մլրդ. մ<sup>3</sup>:

Սևանա լիճը Հայաստանի բնության գարդն է (հնագույն անվանումը՝ Գեղամա ծով): Մեծ Սևանի առավելագույն խորությունը 42 մ է, Փոքր Սևանինը՝ 81 մ: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը:

Լիճն անտնտեսվար և անխնա օգտագործումից խիստ տուժել է և ջրային պաշարները զգալիորեն նվազել են: Լճի մակարդակի իջեցման, ինչպես նաև թափվող անբավարար մաքրված հոսքաջրերի հետևանքով, կտրուկ վատացել էր նաև ջրի որակը: Իրավիճակը մասնակիորեն մեղմացնելու և Սևանի ջրային պաշարներն Արփա գետի ջրերով ավելացնելու նպատակով, 1981թ. կառուցվել է 48 կմ 420 մ երկարությամբ «Արփա-Սևան» թունելը (առավելագույն խորությունը գետնի մակերեսից 1230 մ), որը լճի հետ միանում է 850 մ երկարությամբ բաց ջրանցքով:

Լճի պահպանության վերջին տարիների համալիր միջոցառումներն արդյունավետ իրականացնելու շնորհիվ, զգալիորեն բարձրացել է ջրի մակարդակը (2005թ. սեպտեմբերի 29-ին արձանագրվել է մակարդակի բարձրացման առավելագույն նիշը՝ 1898.14 մ, որը 2000թ. համեմատ բարձր է 1.82 մ-ով):

#### ԱՐՀԵՏՏԱԿԱՆ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՋՐԻ ՀԱՅԵԼՈՒ ՄԱԿԵՐԵՍԸ

	Ծավալը, մլն. մ <sup>3</sup>	Հայելու մակերեսը, հա
Ախուրյան	525.0	4180
Սպանդարյան	257.0	1025
Թոլորս	96.8	480
Ապարան	91.0	735
Ազատ	70.0	285
Ջողազ	45.0	230
Հեր-Հեր	26.0	115
Կեչուտ	25.0	135
Կառնուտ	24.7	234
Գեղի	15.0	35
Շամբ	13.6	112
Հախում	12.0	83
Մանթաշ	8.2	76.4
Թավշուտ	6.0	60
Սևաբերդ	6.0	45
Ախալարս	5.6	170
Հալավար	5.5	38
Մեծավան	5.4	330
Տավուշ	5.3	40
Արփի	5.0	450
Վարդաքար	5.0	86
Սառնաղբյուր	4.9	56
Երևանյան	4.8	95
Ակնայիճ	3.9	53
Դավիթ Բեկ	2.5	14
Արծվաշեն	2.0	26
Գեղարդայիճ	1.5	25
Քարահունջ	1.3	18.3
Ծիլքար	1.2	26
Հագաշեն	1.1	37